Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-052[2]-11.03.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 6-րդ կետով.

«6) ներդրում՝ ներառյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ներդրումը «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-052-11.03.2019-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 6-րդ կետով.

«6) ներդրում՝ ներառյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ներդրումը «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Deleted: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Deleted: ՆԵՐ

Deleted: Հայաստանի Հանրապետության

Deleted: հետևյալ բովանդակությամբ

Deleted: Հայաստանի Հանրապետության

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի հունիսի 3-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-052-11.03.2019-ՏՀ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի նախագիծ				
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Համարակալել Նախագծի 1-ին հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 24-րդ կետեր	1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «իրավասու մարմին» հասկացությունը վերջից լրացնել «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմին» բառերով: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ «հանրային ենթակառուցվածք» հասկացության մեջ, «շենքեր» բառից առաջ լրացնել «այդ թվում » բառերով: 3. Հանել նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: 4. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	«հասանելիության վճարներ» բառերից հետո լրացնել «հանրային գործընկերոջ կողմից» բառերով: 5. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը՝ «մասնավոր գործընկեր» հասկացության մեջ «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը» բառերով, նույն հոդվածի նույն կետում «ՊՄԳ պայմանագիր» բառերից հետո լրացնել «կամ որը սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված կարգով փոխարինում է պայմանագրի կողմ հանդիսացող իրավաբանական անձին» բառերով: 6. Հանել Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:		
Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ և 3-րդ մասի 1-2-րդ կետերի	1.Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «բարելավմանը և» բառերից հետո լրացնել «(կամ)» բառը, «շահագործմանը» բառից հետո՝ «և (կամ) տեխնիկական սպասարկմանը» բառերը: 2. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-2-րդ կետերի համարները տեքստից բաժանել փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 5-րդ հոդված	1. Հանել Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը: 2. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ հանրային ներդրումների կառավարման քաղաքականությամբ սահմանված գերակայություններին:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետեր	1. Հանել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը: 2. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «և ՊՄԳ ընթացակարգերով» բառերը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և հաշվի առնելով սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ֆինանսական պարտավորությունների» բառերից հետո լրացնել «կատարման նկատմամբ» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Հանել նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «և ՊՄԳ ընթացակարգերով» բառերը՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և հաշվի առնելով սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել 1-ին մասով. «1. Իրավասու մարմինը՝» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 11-րդ հոդված	1.Համարակալել Նախագծի 11--րդ հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը: 2. Նախագծի 11-րդ հոդվածից հանել 2-րդ անգամ օգտագործված «4-րդ հոդվածի» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

Նախագծի 13-րդ հոդված	1. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «պահանջներ և (կամ) հրապարակման պարտավորությունից ազատելու դեպքեր» բառերը փոխարինել «պահանջները» բառով: 2. հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով. «2. ՊՄԳ ծրագրերի, դրանց պատրաստման և իրականացման վերաբերյալ այնպիսի տեղեկատվությունը, որի հրապարակումը սահմանափակվում է օրենքներով, ենթակա չէ հրապարակման:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասեր	1.Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասից հանել «մրցութային փաստաթղթերով սահմանված պայմանների և ընթացակարգերի համաձայն» բառերը: 2. Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.Եթե հաղթող հայտատուն հանդիսանում է իրավաբանական անձանց կոնսորցիում, ապա հայտում ներառվում է նաև կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքը: Այդ կառուցվածքը չի կարող փոխվել ՊՄԳ պայմանագրի ստորագրման պահին: ՊՄԳ պայմանագրի ստորագրումից հետո կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:»: 3. Նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «այլ» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 16-րդ հոդվածի վերնագիր և 1-ին մասի 14-րդ կետ	1.Նախագծի 16-րդ հոդվածի վերնագրում «հիմնական» բառից հետո լրացնել «տեղեկությունները և» բառերը՝ նկատի ունենալով, որ 16-րդ հոդվածի 1-ին մասում խոսքը գնում է տեղեկությունների ու պայմանների մասին: Սա բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից: 2. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «14) ՊՄԳ պայմանագրի դադարեցման, այդ թվում՝ միակողմանի, հիմքերը, ընթացակարգերը և հանգամանքները, ներառյալ՝ վարկատուի միջամտության իրավունքները և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		փոխհատուցման հաշվարկի կարգը:»:		
	Նախագծի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. ՊՄԳ պայմանագրի պայմանները, այդ թվում՝ ՊՄԳ պայմանագրի ժամկետը, կարող են փոփոխվել, եթե նման փոփոխություն կատարելու հնարավորությունը հստակ և ուղղակի դրույթով նախատեսված է ՊՄԳ պայմանագրում: Այդ դրույթը պետք է սահմանի հնարավոր փոփոխությունների շրջանակը, բնույթը և կատարման կարգը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում այդ հնարավորությունը կարող է օգտագործվել: 2. ՊՄԳ պայմանագիրը պետք է ներառի սույն հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ՊՄԳ պայմանագիրը միակողմանիորեն փոփոխելու, ինչպես նաև տվյալ հանրային ենթակառուցվածքին կամ հանրային ծառայությանը ուղղակիորեն վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության հետևանքով մասնավոր գործընկերոջ կրած վնասների հատուցման կարգը և պայմանները: 3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված փոփոխությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ 1) լիազոր մարմնի կողմից այդ փոփոխության վերաբերյալ տրված՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը դրական է: 2) ՊՄԳ ծրագիրը շարունակում է համապատասխանել սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

Նախագծի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել և հոդվածը լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասերով. «2. ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ իրավունքը գույքի (գույքային իրավունքների) նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ երրորդ կողմերին փոխանցել հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասն այնպիսի ժամկետով, որը չի գերազանցում ՊՄԳ պայմանագրով սահմանված՝ մասնավոր գործընկերոջ համապատասխան իրավունքի ժամկետը: Հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման ժամկետը չի կարող երկարաձգվել՝ անկախ ՊՄԳ պայմանագրի ժամկետի երկարաձգման իրավունքի առկայությունից: 3. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված իրավունքների փոխանցումը վավեր է միայն հանրային գործընկերոջ կողմից հաստատվելուց հետո: 4. Սույն հոդվածով նախատեսված իրավունքների փոխանցումը անվավեր է այդպիսի փոխանցման կատարման պահից, եթե այն հանգեցնում է ՊՄԳ պայմանագրի ժամկետի գերազանցմանը:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր	1.19-րդ հոդվածի 1-ին մասում «հանրային գործընկերը» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը: 2. 19-րդ հոդվածի 3-րդ մասում «ժամկետում» բառը փոխարինել «կարգով» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս	22-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «հայտատուին» բառը փոխարինել «մասնավոր գործընկերոջը» բառերով և «նպատակով» բառից հետո լրացնել «, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:»: բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասեր	1. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է բոլոր ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը:»: 2. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասում «ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմնին» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով» բառերով: 3. Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «մատակարարված» բառը փոխարինել «մատուցված» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մաս	27-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «շարունակել» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 29-րդ հոդված	Համարակալել Նախագծի 29-րդ հոդվածի միակ մասը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Նախագծի 9-րդ գլուխ	1.Նախագծի 9-րդ գլխի վերնագիրը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գլուխ IX. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» 2. Նախագծի 9-րդ գլուխը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր հոդվածով. **«Հոդված 30. Անցումային դրույթներ** 1. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հանրային և մասնավոր գործընկերների միջև կնքված ՊՄԳ պայմանագրերի և ՊՄԳ ծրագրերի մասով հայտարարված մրցույթների վրա:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		2.Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետով, 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասով, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի, 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:»:		
«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածի երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներ	2-8-րդ հոդվածներում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածում «481-րդ» բառերը փոխարինել «48.1-ին» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի դրույթները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներ	6-7-րդ հոդվածներում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 6-րդ հոդված	6-րդ հոդվածի «ենթակետով» բառը փոխարինել «կետով» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Նախագծի 8-րդ հոդված	8-րդ հոդվածի 1-ին մասի «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի				

Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	նախագծի վերնագրի «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	Վերնագրում	նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերը փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	Հանել նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ	նախագծի 2-րդ հոդվածով լրացվող ենթակետը	Ընդունվել է:	Ընդունվել է:

	հոդված	տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
<< կառավարություն	Վերնագրում	վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածի 1-2-րդ մասերից «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածի 1-2-րդ մասերում (3-րդ հոդվածի 2-րդ մասում «ՀՀ» հապավումը) կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.				
ՀՀ կառավարություն	Վերնագրում	Նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության օրենքում» բառերը փոխարինել «օրենքում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում երկու անգամ օգտագործվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածում կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	նախագծի 3-րդ հոդված	նախագծի 3-րդ հոդվածից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: